Հավելված
ՀՀ վարչապետի 2014 թ.
փետրվարի 21-ի N 129 - Ա
որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՐԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄՆԱԲԱԺՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Ծրագրային գործողությունները	Պատասխանատու գերատեսչությունը	Ժամկետները
1.	1) Ընդունել և իրականացնել Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային ռազմավարություն, որը ներառում է կանանց ձեռներեցության խթանման բաղադրիչ, և	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ)	30.06.2014թ.
	2) ապահովել կանանց ձեռներեցության խթանման հարցերով միջգերատեսչական համակարգման աշխատանքային խմբի աշխատանքները		
2.	1) Նշանակել ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի նոր, անկախ անդամներ: Այդ նորանշանակ անդամների առնվազն 50%-ը պետք է լինեն կանայք	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ)	30.06.2014թ.
	2) պահանջել, որպեսզի Հոգաբարձուների խորհուրդն անցնի հավաստագրված վերապատրաստում կորպորատիվ կառավարման լավագույն գործելակերպի վերաբերյալ		

3.	1) Ուժեղացնել ՓՄՁ ԶԱԿ-ի ռիսկերի կառավարման կոմիտեն՝ նրան հնարավորություն տալով աջակցելու ռիսկերի մոնիթորինգի, վերահսկման և վերլուծության հարցերում, որոնք կապված են նրա կողմից տրամադրվող ֆինանսական ծառայությունների հետ, և ապահովել, որպեսզի կոմիտեի կազմում առնվազն 50%-ը լինեն կանայք	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ)	30.06.2014թ.
	2) պահանջել, որպեսզի ՓՄՁ ԶԱԿ-ը ընդունի ներքին ընթա-ցակարգեր՝ գնահատելու համար վարկային ռիսկը, որը կապված է ֆինանսական ծառայությունների տրամադրման հետ, և վերապատրաստի իր աշխատակազմին այդ ընթացակարգերի կապակցությամբ		
	3) ստեղծել միջոցների հատկացման գնահատման խորհուրդներ՝ տարածաշրջանային մակարդակով՝ ներգրավելով ՓՄՁ ԶԱԿ-ին և համապատասխան շահառուներին		
4.	1) Ընդլայնել տվյալների բազան մինչև առնվազն 10.000 ՄՓՄՁ-ներ՝ տարանջատելով գենդերային տվյալները և էթնիկ պատկանելության մասին տվյալները	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ)	30.06.2014թ.
	2) անցկացնել ՄՓՄՁ-ների տարեկան ուսումնասիրություններ՝ ներառելով ձեռներեց կանանց և ՄՓՄՁ-ներին և նախանշել կանանց կարիքները, նրանց տրամադրվող աջակցման ծառայությունների արդյունավետությունը (ներառելով քաղված դասերի և այն հնարավորությունների մասին, որոնք պետք է զարգացնել)		
5.	1) Զարգացող ոլորտներում նախանշել հնարավորություններ ձեռներեց կանանց համար	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ)	30.06.2014թ.
	2) իրականացնել գործողությունների պլան՝ իր թիրախներով և ցուցանիշներով՝ զարգացնելու համար կանանց ձեռներեցությունը կոնկրետ ոլորտներում		

6.	1) Աջակցել ձեռներեց կանանց՝ հետևյալ միջոցներով՝	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ)	30.06.2014թ.
	ա. տրամադրելով «սկսնակների» վերապատրաստման առնվազն 20 ծրագիր		
	բ. իրականացնելով առնվազն 4 իրազեկման քարոզարշավ բիզնեսի զարգացման ծառայությունների ռեսուրսների վերաբերյալ		
	գ. բարելավելով ՓՄՁ ԶԱԿ-ի վեբ կայքը և դրա «առցանց շուկան»՝ ձեռներեց կանանց կոնկրետ կարիքների բավարարման նպատակով		
	դ. օգտագործելով տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաները՝ մեծացնել «սկսնակների» համար քարոզ-արշավների հասանելիությունը՝ ծառայություններ մատուցելով տարեկան առնվազն 2.400 մարդկանց, որոնցից առնվազն 50%-ը կլինեն կանայք		
7.	1) Մշակել և փորձարկել ուսուցման ցանց ձեռներեց կանանց համար, որը կարող է ներառել տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործումը՝ ուսուցմանն աջակցելու նպատակով	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ)	30.06.2014թ.
8.	1) Թողարկել առնվազն 300 վարկի երաշխիք վարկի երաշխավորման վերանայված սխեմայի ներքո (որի մոտավոր արժեքն է 1.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեքը) և (կամ) տրամադրել այլ ֆինանսական ծառայություններ՝ ձեռնարկությունների և «սկսնակների» համար, որոնց առնվազն 50%-ը կանայք են և ՄՓՄՁ-ներ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ) ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	30.06.2014թ.
	2) ապահովել, որպեսզի ՄՖՀ-ներն ամբողջությամբ կատարեն երաշխիքների հետ կապված բոլոր գնահատումների, համապատասխանության և մոնիթորինգի պահանջները, ինչպես նշված է ծրագրի վարկային համաձայնագրում		

9.	1) Աջակցել բիզնեսի զարգացմանը՝ ներառյալ կանանց ձեռներեցության, հետևյալ միջոցներով՝	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (համաձայնությամբ)	30.06.2014թ.
	ա. ընդունելով գործողությունների պլան՝ ապահովելու համար համագործակցությունը ՓՄՁ ԶԱԿ-ի և Զարգացման հայկական գործակալության միջև՝ միկրո-, փոքր, միջին և խոշոր ձեռնարկություններին, այդ թվում՝ ձեռներեց կանանց և նրանց ՄՓՄՁ-ներին արդյունավետ աջակցություն ցուցաբերելու հնարավորություն ստեղծելու նպատակով		
	բ. կիրառելով վիրտուալ «մեկ պատուհանի» մոտեցումը՝ ձեռներեցների համար ստեղծել տեղեկատվությունից, ապրանքներից և ծառայություններից օգտվելու արդյունավետ հնարավորություն բիզնես սկսելու և զարգացնելու համար՝ տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների հնարավորություններն օգտագործելու միջոցով		
	գ. համախմբելով ՄՓՄՁ-ների տվյալների ներկայիս բազաները մեկի մեջ՝ տարանջատել գենդերային տվյալները		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ